Ե՝ ՏԱՐԻ ԹԻՒ 1303 — ՇԱԲԱԹ 7 ՄԱՅԻՍ 1888 — (Ն. Տ.) 19 ՄԱՅԻՍ 1888 — 8 ԲԱՄԱՋԱՆ 1305

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂՎԻ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալատիա, Նորատունկեան-խան

دره‌ده غلطه‌ده نورادونكيان خانده اداره‌سى

غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԳԳՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	ստանդարտ աքծաթ	160
» »	Վեցամեայ	» »	80
» »	Երեքամեայ	» »	40
Գաւառաց »	տարեկան թղթատարով	» »	240
Գաւառաց համար եւ տեղական	թղթատարով վեցամեայ	» »	120
Օտար երկիրներ, տարեկան		Փրանք	56
» »	վեցամեայ	»	28

Դուրս զրկուած լրագրաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Թղթակցութեանս զրկուած նամակ կամ գրութիւն չի չարուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՕԼԻՍ, 7 ՄԱՅԻՍ, 1888

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Թէեւ քաղաքական կացութեան մէջ կարեւոր փոփոխութիւններ չկան, բայց Անգլիոյ զինուորական զօրութեանց աճման նկատմամբ վերջին օրերս տրուած տեղեկութիւնը նոր վիճակ մը կը պարզեն մեր առջեւ. Այսպիսի աճում մը անգլիական ժողովուրդն ու կառավարութիւնն անհրաժեշտ կը համարին՝ ի նկատ առնելով եւրոպեան բանակաց հսկայաբաշխ զինեալութեանց դէմ երկրին պաշտպանութեան միջոցներն աւելի կատարեալ վիճակի մէջ դնելու անհրաժեշտ հարկը. Բայց գործին մէկ ուրիշ կողմը ցոյց կուտար անցեալ օր Հավասի հեռագիր մը, որ կ'ըսէր թէ Անգլիոյ զինուորական զօրութեանց աճման համար ցոյց տրուած հոգածութիւնը պատրուակ մ'է լոկ՝ «Երկրին և Խորհրդարանին հաւանութիւնն ստանալու համար այն դրամական վարկերուն, որովք եւեթի կարելի պիտի լինի Անգլիոյ միջամտութիւնն եւրոպեան առաջիկայ պատերազմին». Ուրեմն, եւրոպեան առաջիկայ պատերազմ մը որոշուած բան մ'է. ուրեմն, Անգլիոյ միջամտութիւնն ալ որոշուած է. եթէ այս երկու հետեւութիւնը ճիշդ են, զարմանալի չէ որ Անգլիա հոգ տանի իւր զինուորական ոյժերն աւելցնելու և լաւագոյնս կազմակերպելու.

Բայց ո՞ր կողմէն և ի՞նչ պատճառաւ պիտի ծագի «եւրոպեան առաջիկայ պատերազմը». Զօր. Պուլանժէի և իւր կուսակցաց յիմարութիւններն ի Ֆրանսա և Պալքանեան Թերակղզոյ չփոթ վիճակը բաւակա՞ն են անխուսափելի ընծայելու եւրոպեան պատերազմ մը. Եթէ կարելի է որ Զօր. Պուլանժէ դիկտատոր մը դառնայ և պատերազմ բանայ իւր իշխանութիւնը զօրացնելու համար, նոյնչափ ևս կարելի չէ՞ որ Ֆրանսայի ժողովուրդը բանայ իւր աչքեր «բանը բանէն չանցած», եւ նոր պարանոցի մը զոհ չտայ իւր այժմեան ազատութիւն եւ բարեկեցութիւն. Եթէ կարելի է որ մակեդոնեան ինդիր մը ծագի, կամ նոր յեղափոխութիւն մը տեղի ունենայ ի Պուլկարիա, նոյնչափ ևս կարելի չէ՞ որ Ֆերտինանտ Իշխան յայտնի խաղաղապէս շարունակել իւր կառավարութիւն, եւ Տէրութիւնը՝ ինչպէս ցարդ՝ այսուհետեւ ալ չուզեն բռնի պաշտօնակ ընել ինքն, և Կայս. Կառավարութեան զգուշաւոր տնօրինութիւնը հանդարտ վիճակի մը մէջ պահեն Սելանիկի, Մանաստիրի և Քոսովոյի գաւառներն. Ըստ մեզ, հաւանականութիւնը առ ածմ հաւասար են այս ամէն պարագայից մէջ. Բայց չափաւոր յոռետեսութիւն մը և համեմատական զգուշաւորութիւն մը խմաստութիւն են միշտ, եւ գովելի է Անգլիոյ ընթացքն եթէ՝ նպաստաւոր պատահականութեանց հետ ամենապատրաստներն ևս հաշուի դնելով կ'ուզէ այժմէն միջոցներ ձեռք առնուլ, իւր շահուց և արժանապատուութեան համապատասխան դիրք մը բռնելու համար եւրոպեան առաջիկայ խառնաշփոթութեանց մէջ.

ԿՐՕՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Ա՛ՍԱՐԵՒԵԼՍ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Անգլիացիք ամէն տեսակ կրթական հաստատութեամբք օժտած են Հընդկաստան. Ամէն դասուց վիճակին եւ պէտքերուն համաձայն վարժարաններ բացած են, և այս հաստատութիւնները պսակած են՝ բանի մը գլխաւոր քաղաքներու մէջ համալսարաններ ևս բանալով, որոցմէ հարիւրաւոր ընթացաւարտ կ'ելնեն տարուէ տարի. Միսիոնարութիւնը Հնդկաստանի ամէն կողմը կը գործեն, մեծաքանակ դուռներ վատնելով ամէն տարի. Բայց և այնպէս, Հնդկաստանի թէ՛ մահմեդական և թէ սովորաբար կռապաշտ համարուած ցեղերն, որչափ ալ կրթուին ու զարգանան, իրենց բնիկ կրօնները թողու և ուրիշ եկեղեցի մ'ընդունելու յօժարամտութիւն չեն ցուցներ բնաւ. Ընդհակառակն, այս Հնդիկք, ո՛րչափ աւելի կրթուին ու զարգանան, իրենց բնիկ կրօնին ա՛նչափ աւելի յարեալ կը մնան.

Այս նշանաւոր իրողութիւնն ապացուցանող դէպքեր մերթ ընդ մերթ ներկայացուցած ենք մեր ընթերցողաց, բաղդելով Լոնտոնի լրագրաց անուտ վկայութիւնէն, որ այս պարագայի մէջ անուշյտ անվիճելի է. Անդեաները թարգմանեցինք Հնդկաստանի անգլիացի բարձրաստիճան երեւելի պաշտօնատարի մը (Սըր Լէբէլ Կրիֆֆինի) խօսքերն ալ, որ, առ Մահարդդաս ուղղեալ բանախօսութեան մը մէջ, կը յորդորէր բնիկներն օգտիլ անգլիական քաղաքակրթութենէն, յառաջդիմել անգլիական վարժարանաց և արուեստից մէջ, բայց չթողուլ իրենց նախնեաց «հին անիւ կրօնը», չթողուլ իրենց ազգային և ցեղային յատկանիշերը, և կապկորէն չնմանիլ Եւրոպացիներուն. Վերջին թղթաբերով առնուած Լոնտոնեան լրագրաց մէջ Հընդկաստանէն լուրեր կը տեսնենք, որք միեւնոյն տեսութիւններն հաստատելու կը ծառայեն.

Ի Մառրաս մեծ չփոթութիւն ծագած է «Քրիստոնէական կրթարանի» հնդիկ ուսանողաց ըմբոստութեան պատճառաւ. Լուր եղած էր թէ ուսանողներէն մին մոգիր է Քրիստոնէութիւն ընդունիլ. Ուսանողաց մեծագոյն մասը Պրահմին են. Ուսանողք զարացան, և նախատեցին դաստիարակները, կրօնային ֆրէֆեկտորի հետամուտ համարելով զայն. Անկարգութիւնք ծագեցան, և ամբողջ դասու մը աշակերտք դասէ դադրեցան և տուգանքի ենթարկեցան. Դասը վրայ 640 ուսանողներէն 400ը դպրոցը թողին, եւ ասոնց ընթացքին հետեւեցան մնացեալ 240 աշակերտներէն 100ն ալ. Հրամայուեցաւ ուսանողք դէպ ի դուրս, որոշումներ բուէարկեցին, զիջումներ պահանջեցին, և ծանուցին թէ ոտք չպիտի կոխեն Կրթարանի սեմերէն ներս, մինչեւ որ գոհացում չտրուի իրենց. Հնդիկ հասարակութիւնը կը բաժանուի ուսանողաց ընթացքն, եւ հընդիկ վաճառական մը 60,000 ռուփի խոստացեր է դպրոցական իշխանութեան դիմադրելու մասին աշակերտաց օգնելու համար. Այս կրթարան սկսուցի Միսիոնարաց հաստատութիւնն է, «բայց, կ'ըսէ Թայմսի Թղթակիցն, այս Միսիոնարք յատուկ խմամ կը տային կրօնափոխական ձեռնարկներէ զգուշանալու». Թէ անգլիական կամ եւրոպեան կրթութիւնը կրօնափոխութեան գործը ընելու գաղափարն ո՛րչափ անընդունելի է հնդիկ ժողովրդեան կրթեալ դասերուն, ակներեւ է բոլոր այս չփոթութենէ որ կը ծագի միայն մէկ ուսանողի քրիստոնէութիւն ընդունելու անհաստատ զրոյցէն. Այս մասին Մառրասի անգլիական թերթ մը հետեւեալ ուշագրաւ դիտողութիւնը կ'ընէ.—

«Պարտինք խոստովանիլ թէ ի Մառրաս հիմնեալ այս Քրիստոնէական կրթարանի գլխաւոր նպատակն եղած է համալսարանական ուսումնասիրաւորներ արտադրել քան քրիստոնեայ նորադարձներ. Համալսարանական ընթերցասրահներ արտադրելու մասին կրթարանիս գործած յաջողութիւնը նշանաւոր է. Եթէ սկսուցին ժողովրդերը կը փափաքի միայն համալսարանական կրթութիւն ծառայել ի Մառրաս, ամէն պատճառ ունի գոհ մնալու. բայց այս հաստատութիւն, երբեւ աւելի սարանական կամ կրօնափոխական գործակալութիւն, անշուշտ անյաջող է.»

Թայմսին Թղթակիցն իւր կողմէ կը յարէ թէ «Մառրասի Կրթարանին ուսանողաց ընթացքին բացատրութիւնը պէտք է որոնենք բնիկ հնդիկ լրագրութեան քարոզութեանց մէջ, որ միշտ կը գրէ թէ հաստատեալ իշխանութեանց դէմ ըմբոստութիւն գլխաւոր պարտաւորութիւնն է հնդիկ հասարակութեան ամէն հարեւնասէր անդամի». Բայց դէպքին պարզ քննութենէն կ'երեւի թէ այսչափ հեռի երթալու պէտք չկայ.— Հնդիկներն, ո՛րչափ եւս ուսեալ, իրենց հարց կրօնը թողուլ չեն ուզեր. Զենք կրնար հաւատալ թէ ուսեալ Հնդիկները կռապաշտ են, և արդէն արեւելեան կրօնից նորագոյն քննութիւնը ցոյց տուած են թէ կռապաշտութիւնը դէպ ի ռամկին մէջ միայն կայ. Ուսեալ Հնդիկներ կը տեսնեն թէ իրենց հարց կրօնը՝ նախապաշարումներէ զտուած՝ կը բաւէ իրենց հոգեկան պէտքերը գոհացնելու, և հետեւապէս չեն ընդունիր քրիստոնէական եկեղեցին, թէև՝ ըստ մեզ՝ քրիստոնէութիւնն ամէն հնդիկ կրօնէ գերի ի վեր է. Լուր մը կը տարածուի թէ սկսուցի Միսիոնարք զեղծումը կ'ընեն՝ կրթական հաստատութիւն մը կրօնափոխական գործիք մ'ընելով. ուստի և հնդիկ երիտասարդութիւնն, իւր հայրենասիրութեամբ զոր կ'արծարծէ եւրոպեան կրթութիւնը, կը յուզուի և կը բողոքէ. Ասոր մէջ զարմանալու բան մը չկայ.

Զարմանալու բանն ա՛յն է միայն որ այս տեսակ իմացական և ընկերական շարժումներն հասկնալու կարող կարծուած մարդիկ, Միսիոնարներ, Հայոց մէջ վարժարանները բանալով, կը յուսան Հայ եկեղեցին տկարացնել և մղում տալ իրենց կրօնափոխական ձեռնարկներուն. Մեր համոզումն է սակայն թէ Հայը ո՛րչափ աւելի կրթութիւն ա՛ն չափ աւելի յարեալ պիտի մնայ իրենց ազգային եկեղեցւոյն. Ազգասիրութիւնն արծարծել եւրոպեան կրթութեան ձիրքերէն մին է, և ճշմարտապէս ազգասէր Հայ մը, ո՛րչափ ևս կրօնասէր, երբեք չպիտի հաւանի իւր ազգային եկեղեցւոյն տկարացման և քայքայման. Ամէն ժողովուրդ ունի իւրընկերական և իմացական վիճակին յարմարող եկեղեցի մը, յորմէ իւր ամէն անհատ կրնայ ընդունիլ իւր հոգեկան պիտոյից գոհացումն ըստ չափու իւր իմացական ոյժութեան. Թողո՛ւնք արեւմտեան ժողովուրդներն յորս կրօնափոխական չարժումներն ի վաղուց դադրած են, ահա՛ Հնդկաստանն իսկ, քաղաքակրթութեամբ մեզմէ տակաւին չա՛տ յետնեալ Հնդկաստանն իսկ, իւր զարգացեալ սերունդեան միջոցաւ նո՛ր ճչմարտութիւնը կը հռչակէ և նո՛ր օրինակը ցոյց կուտայ մեզ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՒԻԵՐԱ. Դերման լրագրիք հեռագրագրաշարժ դէպք մը կը պատմեն. Պաւիերայի Լուտվիկ Բ. Թագաւորին ինքնասպանութիւնը ծանօթ է. Ցայսմէ է նաև թէ չատ չուայլ և արտակարգ վեհապետ մ'էր նա, և միանգամայն յոյժ սիրելի էր իւր ժողովրդեան. Իւր ողբալի վախճանէն յետոյ, իւր գոյից և կալուածոց մեծ մասը վաճառել կամ գրաւի տակ դնել հարի եղաւ, իւր թոռան ահագին պարքերը վճարել կարենալու համար. Արդ, ամերիկացի հարիւրածանօթ միլիոնատէրն Պ. Վանդերպիլդ վերջերս փառաբրութիւն ունեցաւ գնելու Պաւիերայի վախճանեալ Թագաւորին սիրական գեղեցիկ Լինտընֆիլտի. Առուծախի պայմանագիրն օրինաւորապէս կնքուեցաւ ի մէջ Պ. Վանդերպիլդի և գժբախտ Թագաւորին կոակատարաց. Ամերիկացի միլիոնատէրն և իւր կին, Թագաւորական դղեակի մը մէջ ննջելու հաճոյքը վայելելու համար, գնացին նորատաց պալատն, ուր քանի մը օր պիտի մնային. Իրենց հետ քանի մը սպասաւորներ տարին, և մնացեալ սպասաւորները շրջակայից Պաւիերացիներէն ընտրեցին. Բայց նոյն ժամայն տեսաւ Պ. Վանդերպիլդ թէ շրջակայ ժողովուրդը տասիկ ատելութեամբ կը նայի վաղամեռիկ սիրելի Թագաւորին սիրական բնակավայրը գրաւող օտարականին. Գիշերը Պ. և Տիկին Վանդերպիլդ ննջեցին Կայսրայ Սենեկին մէջ, ուր ամենէն աւելի կը ննջէր Լուտվիկ Բ.—հոյակապ սենեակ, զարդարեալ Լուի ԺԴ. Քաղաքորին ժամանակուան ոճով, և լի ծերանապի այն մեծանուն ինքնակալին յիշատակօք, որուն նկատմամբ խորին մեծարանք կը տածէր Լուտվիկ Բ. Բայց Պ. և Տիկին Վանդերպիլդ հազիւ թէ պառկած էին, և տարօրինակ ձայներ սկսան լսուիլ դղեկին մէջ. Տիկին Վանդերպիլդ վախցաւ և պնդեց որ ամուսինն ելնէ և քննութիւն մ'ընէ. Պ. Վանդերպիլդ ելաւ, դղեկին ամէն կողմը նայեցաւ, և բան չգտաւ. Տիկինը, շրջակայից լսւած խորհրդաւոր և դրդեթէ վայրի երեւոյթէն ահաբեկ, չկրցաւ քնանալ այն գիշեր. Հետեւեալ օրը, Պ. Վանդերպիլդ, վստահ լինելով թէ Պաւիերացւոց մէկ կատակն էր գիշերուան դէպքը, քնութիւն բացաւ, սակայն բան մը չսպասցուցուեցաւ. Ամբողջ օրն հետաքրքրութիւններ ըրին այր և կին, և որվհետեւ առջի գիշերը չէին քնացած, հետեւեալ գիշերը կանուխ պառկեցան. Եւ ահա նոյն տարօրինակ ձայներն և աղմուկները. Վերջապէս, Տիկին Վանդերպիլդ յայտարարեց թէ այս ամուսիներն հանդն «սգիք» լինին թէ թշնամիք, ինք չի կրնար կենալ այդ պալատն մէջ. Հետեւեալ առաւօտ Պ. Վանդերպիլդ իւր կնոջ հետ Միւնիխ վերադարձաւ, և իւր կողմէ դրամական զոհողութիւն մ'ընելով, խզեց պաւիերական պալատն գնման պայմանագիրն.

ՀՐԵԱՅԻ Ի ԴԵՐՄԱՆԻԱ. Մարպուրգի դատարանն այս օրերս դատեց Ֆէնները անուն վարժապետն, որ հանրային դուռ-մարման մը մէջ նախատած էր Հրեաները, սա յայտարարութեամբ.

«Աշխարհիս վրայ կայ պարկեշտ Հրեայ. Ահա՛ իմ կարծիքս այս խնդրոյ վրայ. Գիտէք թէ Թալմուտն է Հրէից օրէնքն. Արդ, Թալմուտի մէջ կը կարդանք սա պատուէր. «Մովսէսի օրէնքը կը վերաբերի միայն «Հրէից ընդ Հրեայս ունեցած յարաբերութիւնին», և չի վերաբերիր օտարազգիներուն. Օտարազգիները խորել և ա-«նոնց ինչքը գողնալ ներելի է Հրէից». Դիտեցէք ուրեմն թէ ի՛նչ է Թալմուտական պատուէրին հետեւանքն.—Եթէ Հրեայն ընկ Թալմուտի մէջ գրուածն, անզգամ է յաչս մեր. եթէ չընէ, անզգամ մ'է յաչս Հրէից. Ամէն պարագայի մէջ, անզգամ մ'է, և կարելի չէ որ անզգամ չլինի.»

Վարժապետն, հրէական կրօնը նախատած լինելու ամբաստանութեամբ, տասն և հինգ օր բանտարկութեան և դատական ծախուց վճարման դատապարտեցաւ.

Այս տեսակ դատեր անպակաս են ի Գերմանիա, ուր հրէատեաց հոսանքը տարուէ տարի չմեղմանալէ զատ, աւելի ևս կը սաստկանայ, և նոյն իսկ հանգուցեալ Վիլհէլմ կայսր գլխաւոր քարոզչին, իւր քրիստոնէական բոլոր բարեպաշտութեամբ հանդերձ, հրէատեաց մ'էր և հակահրէական չարժման պարագլուխ.

ՖՐԵՏԵՐԻԿ ԿԱՑՍԵՐ կոկորդը կը քընուի ելեկտրական լուսով, որոյ շնորհիւ բժիշկները կրնան կոկորդին ներսը տեսնել ըստ կարի պայծառ. Տրդ. Սէմոն յօրինած է այս գործիք, որ ի ցոյց դրուած էր Լոնտոնի Առողջապահական Արուեստահանդէսին մէջ. Գործիքը կը բաղկանայ ելեկտրական բախոցէ մը, խողովակէ մը և կանթեղէ մը, — ամենքը մէկէն փոքր բան մը, որ հինգ ոսկով կրնայ գնուիլ. Խողովակ մը կցուած է բախոցին, խողովակին միւս ծայրն է փոքր կանթեղ մը, որ կը վառի կոճակի մը ճնշմամբ որով ելեկտրական հոսանքը կը վազէ. Երբ ճնշումը վերնայ, լոյսը կը դադրի. Որովհետեւ ջերմութիւն չկայ, կանթեղը կը դրուի հիւանդին բերնին մէջ առանց ո՛և է անհանգստութեան, և լոյսն ա՛նչափ փայլուն է որ բժիշկը կոկորդին ներսը կրնայ տեսնել՝ ամենափափուկ գործողութեանց կատարման համար.

ՌՈՒՄԱՆԻԱ. Պուքրէշի լրագիրք սա տեղեկութիւնները կուսան կարդ Թագաւորն սպանելի փորձող մարդուն վրայ.

Փրեսա Թոդանարու կորի գաւառին Սերդանիւչի քաղաքէն է. Երբեմն հրետաւորաց առաջին դնդին մէջ կը ծառայէր, և երիցս դատապարտեցաւ բանտարկութեան, մարդ զարկած և վիրաւորած լինելուն համար. 1882 ին ալ հնդամեայ բանտարկութեան դատապարտեցաւ՝ մարդ մը սպանելուն համար. 1886 ին ներման արժանանալով, նոյն տարին Պուքրէշի ոստիկանութեան մէջ յինանպետ անուանեցաւ. 1887 ին վերստին դատապարտեցաւ, և 1888 յունուար ամսուն մէջ նորէն ընդունուեցաւ ոստիկանական ծառայութեան մէջ. Վայրագ բնաւորութեան մը տէր լինելն իւր վարած կեանքով ապացուցեալ է, և Թագաւորին նստած սենեկին պատուհաններէն ներս գնտակ արձակած օրն ալ արբեալ էր. Թէեւ իւր եղեռնական փորձը քանի մը ապակիներ կոտրելէ աւելի հետեւանք մը չունեցաւ բարեբախտաբար, բայց իւր առաջին հարցաքննութեան մէջ իսկ խոստովանեցաւ թէ կ'ուզէր գիւղացւոց վրէժն հանել և երկիրն ազատել Դերմանէ մը. (Կարդ Թագաւորին Դերման լինելն յայտնի է.) Իւր երկրորդ հարցաքննութեան մէջ ալ յայտարարեց թէ միտքը դրած էր սպանել Թագաւորն, և յարեց թէ «ուրիշ օր մը առիթ ունէի սպանելու Թագաւորը, բայց տեսնելով որ Թագաւորին անոր քով կը գտնուէր, խնայեցի». Ի՞նչ կնահաճ եղեռնագործ.

ԼՈՐԴ ՔԱՐՆԱՐՎՈՆ ԵՒ ԻՌԼԱՆԴԱ. Երբ Պահպանողականք կ'ամբաստանեն կատաղեռնեանները թէ Բառնէլեանց պահանջումներն ընդունելով իրենց նախկին դաւանութիւններն ուրացած են, Բառնէլեաններն ալ կը պատասխանեն թէ Պահպանողականք ևս պահ մը հակում ցուցած էին հաւանելու իռլանդական ինքնօրինութեան, և ասոր լայագոյց կը յիշեն Լորտ Բարնարվոնի Իռլանդայի Փոխարքայութեան միջոցին իռլանդական կուսակցութեան պարգևոց հետ ունեցած խօսակցութիւններն. Այս խօսակցութեանց մէջ Լորտ Քարնարվոն տրամադրութիւն ցուցեր է ինքնօրինութիւն տալու Իռլանդայի երկրորդ Խորհրդարանի մը, խոզովակէ մը և կանթեղէ մը, — ամենքը մէկէն փոքր բան մը, որ հինգ ոսկով կրնայ գնուիլ. Խողովակ մը կցուած է բախոցին. Խողովակն միւս ծայրն է փոքր կանթեղ մը, որ կը վառի կոճակի մը ճնշմամբ որով ելեկտրական հոսանքը կը վազէ. Երբ ճնշումը վերնայ, լոյսը կը դադրի. Որովհետեւ ջերմութիւն չկայ, կանթեղը կը դրուի հիւանդին բերնին մէջ առանց ո՛և է անհանգստութեան, և լոյսն ա՛նչափ փայլուն է որ բժիշկը կոկորդին ներսը կրնայ տեսնել՝ ամենափափուկ գործողութեանց կատարման համար.

ՌՈՒՄԱՆԻԱ. Պուքրէշի լրագիրք սա տեղեկութիւնները կուսան կարդ Թագաւորն սպանելի փորձող մարդուն վրայ.

Փրեսա Թոդանարու կորի գաւառին Սերդանիւչի քաղաքէն է. Երբեմն հրետաւորաց առաջին դնդին մէջ կը ծառայէր, և երիցս դատապարտեցաւ բանտարկութեան, մարդ զարկած և վիրաւորած լինելուն համար. 1882 ին ալ հնդամեայ բանտարկութեան դատապարտեցաւ՝ մարդ մը սպանելուն համար. 1886 ին ներման արժանանալով, նոյն տարին Պուքրէշի ոստիկանութեան մէջ յինանպետ անուանեցաւ. 1887 ին վերստին դատապարտեցաւ, և 1888 յունուար ամսուն մէջ նորէն ընդունուեցաւ ոստիկանական ծառայութեան մէջ. Վայրագ բնաւորութեան մը տէր լինելն իւր վարած կեանքով ապացուցեալ է, և Թագաւորին նստած սենեկին պատուհաններէն ներս գնտակ արձակած օրն ալ արբեալ էր. Թէեւ իւր եղեռնական փորձը քանի մը ապակիներ կոտրելէ աւելի հետեւանք մը չունեցաւ բարեբախտաբար, բայց իւր առաջին հարցաքննութեան մէջ իսկ խոստովանեցաւ թէ կ'ուզէր գիւղացւոց վրէժն հանել և երկիրն ազատել Դերմանէ մը. (Կարդ Թագաւորին Դերման լինելն յայտնի է.) Իւր երկրորդ հարցաքննութեան մէջ ալ յայտարարեց թէ միտքը դրած էր սպանել Թագաւորն, և յարեց թէ «ուրիշ օր մը առիթ ունէի սպանելու Թագաւորը, բայց տեսնելով որ Թագաւորին անոր քով կը գտնուէր, խնայեցի». Ի՞նչ կնահաճ եղեռնագործ.

ԼՈՐԴ ՔԱՐՆԱՐՎՈՆ ԵՒ ԻՌԼԱՆԴԱ. Երբ Պահպանողականք կ'ամբաստանեն կատաղեռնեանները թէ Բառնէլեանց պահանջումներն ընդունելով իրենց նախկին դաւանութիւններն ուրացած են, Բառնէլեաններն ալ կը պատասխանեն թէ Պահպանողականք ևս պահ մը հակում ցուցած էին հաւանելու իռլանդական ինքնօրինութեան, և ասոր լայագոյց կը յիշեն Լորտ Բարնարվոնի Իռլանդայի Փոխարքայութեան միջոցին իռլանդական կուսակցութեան պարգևոց հետ ունեցած խօսակցութիւններն. Այս խօսակցութեանց մէջ Լորտ Քարնարվոն տրամադրութիւն ցուցեր է ինքնօրինութիւն տալու Իռ-

—)(16)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔ

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԸ

ՊՈԼՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

—Բայց, ըսաւ Գարեգին յանկարծ, ես տամ այդ փոխ ուզած դրամը և դուք տուած եղէք. ասոր պատճառը սա՛ է որ, նախ բարիք մ'ընել կ'ուզեմ այդ մարդուն որ հօրս բարեկամն էր. յետոյ դրամը ես տուած ըլլալով կրնամ յանձնարարել ձեզ որ փոխանակ չորս ամսէն, զոր օրինակ տասն ամսէն հաշուակցիք վարժապետին հետ. Բաց ասոնք ուրիշ նկատում մ'ալ կայ. Եթէ այդ դրամը դուք տաք, պիտի հարցնէք էֆէնտիին եւ ձերինները պիտի իմանան թէ մարդուն նիւթականը տեղը չէ, իրենց գաղափարն ալ պիտի աւելն իր վրայ. մենք կը ճանչնանք իրար, այնպէս չէ՞, Աւետիս աղա, ամէն բան նիւթականէն կը դասեն ձերինները.

Եւ Գարեգին գնաց դրամարկղէն բերաւ չորս հատ հինգ ոսկնոց պանքնոթներ զորս Աւետիս աղային երկնցուց, բայց յանկարծական գաղափարէ մը լուսաւորեալ՝ մէկէն ետ քաշեց իւր ձեռքն եւ ըսաւ.

—Սակայն կրնայ ըլլալ որ խեղճ վարժապետը մեր օրերու համար պէտք ունեցած ըլլայ, ուստի մենք միւնոյն գիւղը կը բնակինք, երեկոյին պահարանի մը մէջ իրեն կը զրկեմ այս դումարն իւր ձեր կողմանէ եւ իմ միջոցաւս ըլլալն իսկ գիտցնել չեմ տար. այսպէս աւելի ազնիկ կ'ըլլայ, Աւետիս աղա, եւ ինչպէս ըսի, բնաւ մի տարկէք որ վարժապետը չորս ամսէն հաստուցանէ այդ գումարն. եթէ չը տայ իսկ, հոգ չէ.

—Աստուծմէ գտնաս վարձքդ, ըսաւ Աւետիս աղան Գարեգինի, խանդաղատելով անոր բարեսրտութեան վրայ.

Եւ Նոյն իրիկունն Անդրանիկ վարժապետ կ'ուտանար իւր երաշտ քսան ոսկիներն. ու Գարեգին կը հրմտէր, բարիք մ'էր ըրած վարժապետի՛ն, ու կ'զգար այն բերկրանքը զոր բարի սրտեր կը գտնեն գործուած առաքինութեան մը գոհունակութեանը մէջ եւ զոր փառասէր ոգիներ երախտագէտ մը շահելու մէջ կը փնտռեն ի զուր.

Գարեգին կը խորհէր. վարժապետը պիտի կրնա՞ր առանց բարոյական տարնացում մը կրելու ընդունիլ այդ դումարն եթէ ինք անձամբ տուած ըլլար զայն. պիտի կրնա՞ր այսօր անզգամ իրեն կարգադրել իւր ձեռքն օգնութիւն խնդրելու համար, եւ վաղը, իւր աներոջ դարձած, իրեն երկնցնել դարձեալ այդ ձեռքն որպէս զի համբուրել տայ. Ի՞նչ նուաստացում իւր աներոջն համար որ տակաւն հօր մը չպի պատկառանք վայելել պիտի բաղձար անշուշտ իւր փեսէն. Ամէնն այդ չէր. Եթէ հայրը պատահմամբ յայտնէր իւր ազգկան այն ձեռնտուութիւնը զոր Գարեգին ըրած էր իրեն, խեղճ աղջիկը նուաստացեալ չը՞ պիտի զգար ինքզինքը իւր առջեւ. Կ'ուզէր խնայել անոր դիւրազգածութեան. եւ յետոյ, ամէն բանէ վեր, ինչ որ հազիւ կը համարձակէր ինքնիրեն խոստովանիլ, կը բաղձար գտնել ի նա սիրող սիրտ մը որ կը փարի իրեն վասն զի կը սիրէ զինքն եւ ո՛չ անոր համար որ երախտագէտ է իրեն. կը տենչար սիրուիլ իւր ամուսնի եւ ո՛չ յարգուիլ իւր բարեբար, ու համոզուիլ թէ սիրուած է, այս պիտի ըլլար իւր երջանկութիւնն. Ուրեմն չատ բարեպատեհ էր Աւետիս աղային ընծայած առիթն որ բարիք մը կը ծնէր եւ անոր հեղինակը կ'ազնուէր. Գարեգին հրմտանաց մէջ էր.

Ժ.Բ

Շարաթ գիշեր էր.

Եւ կառք մը Նշան ապային, Անդրանիկ վարժապետի եղբօր, տունէն առած Աստղիկն ու իւր հայրը, սրարշաւ կ'անցնէր Բերայի մեծ փողոցէն դիմելով Նահապետեանց տունն, Աղամանի փողոց.

«Նայէ, հայրիկ, դուրսնայէ» կը մտմտնէր Աստղիկ իւր ձեռքն հօրը ծնկին կրթնցնելով ուժգին եւ գլուխը դէպի պատուհանն հակելով, դուրսը դիտելու համար. Դուրսը, հրապուրիչ էր տեսարանն. արդուզարդուց վաճառատուներն իւրեանց ցուցասրեղի միահատոր ապակիներուն ետեւէ տես դրած էին իւրեանց շքաշներու ու ընտիրներու, շքեղագեղն ու ճոխագեղն, արուեստական ծաղկանց ոզոմանմէ մը մէկ եւ շքնաղատեսակ հոտաց մանրիկ ու դիմթիկ զարդուց առարկաներով ցիրուցան դրուած, որոց վրայ օդային կապի լեզուակներ ժգագոյն-կապտագոյն լոյս մը կը սփռէին, զգածութեան. եւ յետոյ, ամէն բանէ վեր, ինչ որ հազիւ կը համարձակէր ինքնիրեն խոստովանիլ, կը բաղձար գտնել ի նա սիրող սիրտ մը որ կը փարի իրեն վասն զի կը սիրէ զինքն եւ ո՛չ անոր համար որ երախտագէտ է իրեն. կը տենչար սիրուիլ իւր ամուսնի եւ ո՛չ յարգուիլ իւր բարեբար, ու համոզուիլ թէ սիրուած է, այս պիտի ըլլար իւր երջանկութիւնն. Ուրեմն չատ բարեպատեհ էր Աւետիս աղային ընծայած առիթն որ բարիք մը կը ծնէր եւ անոր հեղինակը կ'ազնուէր. Գարեգին հրմտանաց մէջ էր.

Ժ.Բ

Շարաթ գիշեր էր.

Եւ կառք մը Նշան ապային, Անդրանիկ վարժապետի եղբօր, տունէն առած Աստղիկն ու իւր հայրը, սրարշաւ կ'անցնէր Բերայի մեծ փողոցէն դիմելով Նահապետեանց տունն, Աղամանի փողոց.

«Նայէ, հայրիկ, դուրսնայէ» կը մտմտնէր Աստղիկ իւր ձեռքն հօրը ծնկին կրթնցնելով ուժգին եւ գլուխը դէպի պատուհանն հակելով, դուրսը դիտելու համար. Դուրսը, հրապուրիչ էր տեսարանն. արդուզարդուց վաճառատուներն իւրեանց ցուցասրեղի միահատոր ապակիներուն ետեւէ տես դրած էին իւրեանց շքաշներու ու ընտիրներու, շքեղագեղն ու ճոխագեղն, արուեստական ծաղկանց ոզոմանմէ մը մէկ եւ շքնաղատեսակ հոտաց մանրիկ ու դիմթիկ զարդուց առարկաներով ցիրուցան դրուած, որոց վրայ օդային կապի լեզուակներ ժգագոյն-կապտագոյն լոյս մը կը սփռէին,

տունը եկած ըլլար եւ ինչ այսպէս զարդարուած տեսնէր.»

Շատ գոհ էր Աստղիկ իւր շքեղագեղութենէն որ իրաւամբ յոյժ սիրուն էր. բայց, հակառակ իւր հօրեղբօրդ ստեր կարծեաց, դժուարաւ ուզած էր համոզուիլ որ իւր շքեղագեղութեան վրայ դրած փունջը կուրծքին վրայ դրուած փունջին հետ «կ'երթար». այս բան մտահոգութիւն պատճառած էր իրեն պահ մը. բայց վերջապէս Զապել Բերա բնակելով իրմէ աւելի լաւ գիտէր արդուզարդուց մանրամասնութիւններն, եւ արդէն նա չէ՞ր որ այնքան վայելչապէս յարդարած էր իւր մազերը, շքեղագեղութեան չափ, ու թերեւս աւելի իսկ յուսահատօրէն մտածած էր «մազերը շտկելու» մէջտեղն վրայ, զրոյ ահա Զապել այնքան յաջողութեամբ յարդարած էր եւ որոց վրայ թերեւս պիտի նախանձէին անոնք իսկ որ անսպառ համբերութեամբ ժամերով նստած էին Իզմիրոնին առջեւ. Այս մտածմանց մէջ էր խորասուզուած էր Աստղիկ. բայց իւր մտածումները կ'ընդմիջուէին ամէն անդամ որ իրենց կառքն ուրիշ կառաց կամ ամբոխին բաղխելու վտանգին առջեւ կանգ կ'առնուր պահ մը, եւ այն ատեն պատատրոփ կը հարցնէր իւր հօր. «Եկա՞նք».

Եւ երբ

լանտայի. բայց իւր պաշտօնակիցը, Լորտ Սալզպըրի և այլք, չեն հաւաներ, և Լորտ Քարնարվոն հրաժարեր է. Պ. Բառնէլ վերջին օրերս այս իրողութիւնները յիշեցուցած լինելով, Լորտ Քարնարվոն Թայմսի մէջ երկար նամակ մը հրատարակեց, որով կը պարզէ իւր իռլանտական քաղաքականութիւն. Կ'ըսէ թէ Իռլանտայի խնդիրը լուծելու համար երեք եղանակներ միայն կան, որոց երրորդը լոկ առժամանակեայ կարգադրութիւն մ'է.

Առաջն.— Ընդարձակագոյն ինքնակառավարութիւն մը տալ Իռլանտայի.

Երէրդ.— Իռլանտայի մէջ մուծանել գաղթական ինքնօրէն վարչութեան տեսակ մը, երկրին մասնաւոր պարագային համեմատ բարեփոխեալ.

Երրորդ.—Արդի հիմանց վրայ զօրեղ և բարեացակամ վարչութիւն մը կազմակերպել, օրինաց մէջ ինչ ինչ բարեփոխութեամբք, կարգադրելով հողային խնդիրն, և ընդարձակելով Իռլանտայի Փոխարքային իշխանութիւնները.

Լորտ Քարնարվոն կը մերժէ առաջին լուծումն, որ է ճշդիւ Բառնէլեանց պահանջումը. կը մերժէ երրորդն ալ, որ Լորտ Սալզպըրիի Վարչութեան արդի պաշտօնական քաղաքականութիւնն է Իռլանտայի մասին, և կը հաւանի երկրորդ լուծման. այսինքն կ'ուզէ որ Իռլանտա վայելէ Անգլիոյ պետական գաղթականութեանց արուածին նման ինքնօրինութիւն մը. Պետական գաղթականութիւնք կը զանազանին միւս գաղթականութիւններէն այնու որ աւելի կամ նուազ կը գտնուին Լոնտոնի կառավարութեան վերին տնօրինութեան ներքեւ, մինչ միւս գաղթականութիւնք գրեթէ բոլորովին անկախ են իրենց ներքին վարչութեան մասին. Պետական գաղթականութիւն են Նադալ, Ճամայիքա, Արևմտեան Աւստրալիա, Մալդա, Կիպրոս, որք չունին Աւստրալիոյ կամ Բարեյուսոյ Հրուանդանին անգլիական գաղթականութեանց չափ ընդարձակ ինքնօրինութիւն.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուսումնական Խորհուրդն որոշած լինելով ինչ ինչ տնօրինութիւններ ընել ազգային վարժարանաց մէջ գործածելի դասագրքանց համար, ի Պարիզաբնակ հրաւիրած էր մայրաքաղաքիս բոլոր հայ գրավաճառներն ու հրատարակիչներն.

Արդ, սոյն հրաւէրին համաձայն, գրավաճառք և հրատարակիչք ոմանք ներկայացան Ուսումնական Խորհրդոյ երեկի նստին. Մեծ. Ատենապետ էֆ. ին նոցա կարծիքն հարցուց թէ ինչպէս կարելի է կանոնաւոր կերպիւ գանձել դասագրոց համար որոշեալ տուրքը: Ներկայք կարծիք յայտնեցին թէ աւելի յարմար է այդ տուրքը գանձել երբ հրատարակիչը կամ հեղինակը ձեռագիրը կը ներկայացնէ ի վաւերացումն. Մեծ. Ատենապետ էֆէնտին սկզբամբ ընդունեց այս կարծիքն և պատասխանեց թէ Խորհուրդը պէտք եղած խորհրդակցութիւնները պիտի կատարէ առ այդ.

Սոյն նստին պահ մը ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն.

Եօղլատի Կրօնական եւ Բաղաքական Ժողովներն հեռագրաւ խնդրած են Ազգ. Պատրիարքարանէն որ իրենց վիճակը բաժնուելով Կիլիկիոյ Կաթողիկոսին իրաւասութենէն, Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ դրուի.

ՅԻՇՆԱՄԵԱԿ ԴԵՐ. Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆԻ

Լրագիրը ոմանք ազգայինք քանի մ'ագամ ծանուցին և մեզմէ ալ խնդրեցին՝ որ Բազմավէպի միջոցով ստոյգ ծանուցանենք իրենց, թէ ի՞նչ է և երբ և ի՞նչպէս պիտի կատարուի Դերապատիւ Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանի Յոբելեանն, Ստիպեալ գոհացնելու և չաւելցնելու այդ հետաքրքրութիւնը, ինքն ալ խնդրեց ի հրատարակութենէս՝ ծանուցանել հարցանողաց, որ՝ Ա. շնորհակալ են և է անոնց և ամենայն բարեսիրաց մտադրութեանը և բարեկրութեանը, զոր թէ՛ այս առթիւ եւ թէ՛ այլովք մինչեւ հիմայ յայտնած են իր հայրենական գրուածոց համար, և թէ՛ իրեն շատ և չափազանց իսկ համարած է և կը համարի այնքան ցոյցերը թէ՛ անցելոյն եւ թէ՛ ապագային համար, և փափաքի որ բարեկամք այլ այսպէս համարին. — Բ. իսկ Յոբելեանին գալով, մեր Միաբանութեան սովորութիւնն է՝ անոնց՝ որ հասնին 50 տարի բահանայութիւն կատարել, ի լման կէս դարուն՝ հանդիսաւոր պատարագ մատուցանել տալ, և ընտանեկան կամ վանական խնդակցութեամբ մաղթանքներ ընել իրենց մէջ. — եթէ հաճի տուողն կենաց՝ քանի մի տարի ալ շնորհել, հասնելու 1890 տարուոյն 10 յունիսի, անշուշտ այսպէս կ'ընէ նա իր միաբան երեք յարգոյ հոգեկից և դասակից եղբարց, որք են Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան և Հ. Դանիել Վ. Լաղեան. — Գ. Հետաքննաց համար յաւելումս, որ Հ. Ղեւոնդ Ալիշան՝ քան զքահանայութեանն իրեն սիրելագոյն համարէր զյիշատակ ուխտի կրօնաւորութեանն, որ և լրացաւ և կատարեց ի սկիզբն այս ներկայ տարւոյս. եւ այնուհետեւ իր վիճակին յարմարագոյն և խնկելի համարելով զլռութիւն, այժմէն ներումն խնդրէ՝ եթէ խօսել եւ մոնչել մեայ առ արտաքին փողս և ներքոյս յոբելեան յիշատակի. (Բազմավէպ)

ՄԱՍԻՍ ամսոյս թերթի նոր շրջանի առաջին թերթին մէջ «Ազգային Տեսութիւն» մը հրատարակած լինելուս առթիւ, ընթերցողներէն շատեր կարծած են թէ Մասիսի խմբագրութիւն վերստին ես ըստանձնած եմ եւ հետեւաբար նամակներ կ'ուղղեն ինձ և տեղեկութիւններ կ'ուզեն. Հարկ կը համարիմ յայտնել թէ սխալում կայ. Մասիսի խմբագրութիւնը կը պատկանի նորա Տնօրէնին՝ Ստեփան Էֆէնտի Տաճատեանի.

7 մայիս 1888 Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

Օրթագիւղէն կը գրեն մեզ մայիս 6 թուականաւ.

Օրթագիւղի Ս. Հռիփսիմեանց և Նեղտարինեան վարժարանի վեցամեայ հարցաքննութիւնք կատարուեցան մայիս 2էն մինչեւ մայիս 5 — Քննութիւնք շատ գոհացուցիչ էին. հայերէն և ֆրանսերէն լեզուաց, իրագիտութեան, աշխարհագրութեան, բնագիտութեան և բնական պատմութեան մէջ. Շատ գիտուեցաւ որ աշակերտուհիք շորրորդ դասարանէն սկսեալ գրաբառ մասնը չարադրութիւններ կը գրէին առանց լերականական վրիպակի. Ընդհանուր գոհունակ արժանացան.

Ե. Կարգի հետեւեալ աշակերտուհեաց պատասխանները ընդհանուր գոհունակութիւն պատճառեցին.

Օր. Վերգին է Գալֆեան
» Մարիամ Երամեան
» Ասղէ Մալէգեան
» Իսկուհի Օգոստինոսեան
» Նազելի Ոսկերիչեան
» Վասիլուհի Եուվանեան
» Արուսեակ Բարթամեան

Իսկ Դ դասու աշակերտուհիներէն յայտ գոհացուցիչ էին Օր. Օկտ Ֆրէնկեան (բացարձակ կերպով). Օր. Ֆոռթիւնէ Մալէգեան և Օր. Սիրանոյշ Հալաճեան.

Մեծապէս շնորհակալ են թաղեցիք Ազնուուի Ինամակալութենէն և մասնաւորապէս Տիկին Տնօրինուհւոյն անձնուէր ջանքերէն, որոց շնորհիւ Հռիփսիմեանց Նեղտարինեան որ վերջին տարեկան հարցաքննութեանց միջոցին 27 աշակերտուհի միայն ունէր, այսօր 60էն աւելի ունի աշակերտուհիներ.

Բայց յատկապէս ուշադրութիւն գրաւած է իրր ամենաօգտակար նորութիւն մը որ պէտք է օրինակ հանդիսանայ ամեն թաղերու, ձեռագիրութեան և կարի դասերը զոյս տիկնայք արդիւնաւորապէս կ'ուսանէին Մեծ. Գալէնտէրեան էֆէնտի, հրատարակիչ Ե-ի, և զոյս աշակերտուհիք այնքան յաջողութեամբ կ'ուսանին.

Տարակոյս չկայ թէ տարեկան ընդհանուր քննութիւնք գոհունակութեան աւելի մեծ առիթ պիտի հայթայթեն մեզ.

Խասգիւղի Թաղ. Խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ վաղը գիւղին Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն տօնախմբութիւնը լինելով, Դեր. Դարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց հրաւիրեալ է Ս. Պատարագ մատուցանել ի հոգեւոր մխիթարութիւն ժողովրդեան.

Երէկ, ուրբաթ, ի Գատը գիւղ, Մեծ. Գէորգ էֆէնտի Սարգսեանի բնակարանին մէջ տեղի ունեցաւ իր Ազն. քրոջ Օրիորդ Վերգինէ Սարգսեանի նշանախօսութիւնն ընդ Մեծ. Կարապետ էֆէնտի Մէրտէրտիչեանի, վաճառական ի Կ. Պոլիս.

Ներկայ էին երկուց կողմանց բարեկամք և ազգականք.

Հրատարակեցաւ ԹՕՆԱԿի այսօրեայ թիւն հետեւեալ բովանդակութեամբ.

Կրօնական. Վերստին ծնունդ մարդոյ. —Վ. Վարպետական. Աստուած արարիչ. —Յ. Եկեղեցական. Կանոնագիրք. —Մարգարիտ եպիսկոպոս Օրմանեան.

Ստացանք ԵՒԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ շաբաթաթերթի այսօրեայ թիւն.

Հրատարակուեցաւ ԿՐԹԱՐԱՆ ամսօրեայ հանդիսի ապրիլի ամսաթիւն հետեւեալ բովանդակութեամբ.

Նամակ (Մ. Կիւրճեան)—Գիշեր մը Ալիսի տխանց մօտ.—Բրդոց ազգային երդն (Գ. Վ.)— Կեանք և մահ (Ա.).— Հայ լեզուի դիրքն (Լ. Տ.).—Մնուանդ (Լ.)— Այլ եւ այլք.—Հայկական Կրթարան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՍԷԼԱՄԼՐԲԸ

Եբլորդի պալատան մօտ կառուցուած թէբքէի մը և յարակից մզկիթին շինութիւնն աւարտած լինելով, Վեհ. Սուլթանն հրաւիրած է որ մզկիթը կոչուի Էրիէրու-Ճամի և թէբքէն ալ Շուլը Տէրէսը. Սոյն մզկիթին մէջ տեղի ունեցաւ երէկ Սէլամլրքի պարարութիւնն ինչպէս նաև թէ՛ թէբքէին և թէ մզկիթին բացման հանդէսը. Վեհ. Սուլթանը բաց կառքով և շքեղ հանդիսիւ Էրիէրու-մզկիթը գնաց. թէբքէին չէյխը՝ Զաֆէր էֆէնտի խնկաման ի ձեռին մզկիթի դուռանէն դիմաւորեց զն. Վեհապատուութիւն որ գնաց բազմեցաւ Իրեն յատուկ տեղը. Նոյն պահուն Վեհ. Սուլթանի առաջին խմամ Եուսուֆ էֆէնտի կարդաց ուրբաթ աւուր միջօրէի աղօթքն որուժյաջողեցին Մարգարէի ծննդեան գրքի ընթերցումն և կրօնական արարողութիւնք. Այս միջոցիս ոչխարներ զոհուեցան և բաշխուեցան աղքատաց ինչպէս նաև Վեհ. Սուլթանի կողմէ չնորհեալ գրամական պարգեւներ. Ցաւարտ սոյն արարողութեանց Ն. Վեհապատուութիւն կայս. պալատ վերադարձաւ միեւնոյն հանդիսիւ.

* *

Երէկ Սէլամլրքի արարողութենէն յետոյ աւստրիական դեսպան Պառոն տը Բալիչէ, որ արձակուրդով Վիէննա պիտի ուղեւորի այսօր, Վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ. եւ իւր հրաժեշտի ողջոյնը մատոյց.

* *

Սէլամլրքի արարողութեան ներկայ գտնուեցան երէկ ամերիկեան ու սպանիական դեսպանք ու դեսպանուհիք, դեսպանատանց ոմանց առաջին թարգմանք, հիւպատոսք եւ այլ օտարազգի երեւելիք.

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԽՕՆԴԻՐ

Լ. Հերբերտ կը հերքէ մի քանի օրէ ի վեր շրջած զրոյց մը թէ Դերմանիա զեկոյց մը պիտի ուղղէ առ Բ. Դուռն ի մասին պուլկարական գործոց, հաստատելով թէ Դերմանիոյ դեսպանն Վիեննայի մէջ ստացեալ է հրաման մը՝ Սոֆիոյ մէջ գրաւոր մասնաւոր հանդիպումներ կը գրէին առանց լերականական վրիպակի. Ընդհանուր գոհունակ արժանացան.

Ե. Կարգի հետեւեալ աշակերտուհեաց պատասխանները ընդհանուր գոհունակութիւն պատճառեցին.

Օր. Վերգինէ Գալֆեան
» Մարիամ Երամեան
» Ասղէ Մալէգեան
» Իսկուհի Օգոստինոսեան
» Նազելի Ոսկերիչեան
» Վասիլուհի Եուվանեան
» Արուսեակ Բարթամեան

Իսկ Դ դասու աշակերտուհիներէն յայտ գոհացուցիչ էին Օր. Օկտ Ֆրէնկեան (բացարձակ կերպով). Օր. Ֆոռթիւնէ Մալէգեան և Օր. Սիրանոյշ Հալաճեան.

Մեծապէս շնորհակալ են թաղեցիք Ազնուուի Ինամակալութենէն և մասնաւորապէս Տիկին Տնօրինուհւոյն անձնուէր ջանքերէն, որոց շնորհիւ Հռիփսիմեանց Նեղտարինեան որ վերջին տարեկան հարցաքննութեանց միջոցին 27 աշակերտուհի միայն ունէր, այսօր 60էն աւելի ունի աշակերտուհիներ.

Բայց յատկապէս ուշադրութիւն գրաւած է իրր ամենաօգտակար նորութիւն մը որ պէտք է օրինակ հանդիսանայ ամեն թաղերու, ձեռագիրութեան և կարի դասերը զոյս տիկնայք արդիւնաւորապէս կ'ուսանէին Մեծ. Գալէնտէրեան էֆէնտի, հրատարակիչ Ե-ի, և զոյս աշակերտուհիք այնքան յաջողութեամբ կ'ուսանին.

Տարակոյս չկայ թէ տարեկան ընդհանուր քննութիւնք գոհունակութեան աւելի մեծ առիթ պիտի հայթայթեն մեզ.

Խասգիւղի Թաղ. Խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ վաղը գիւղին Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն տօնախմբութիւնը լինելով, Դեր. Դարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց հրաւիրեալ է Ս. Պատարագ մատուցանել ի հոգեւոր մխիթարութիւն ժողովրդեան.

Երէկ, ուրբաթ, ի Գատը գիւղ, Մեծ. Գէորգ էֆէնտի Սարգսեանի բնակարանին մէջ տեղի ունեցաւ իր Ազն. քրոջ Օրիորդ Վերգինէ Սարգսեանի նշանախօսութիւնն ընդ Մեծ. Կարապետ էֆէնտի Մէրտէրտիչեանի, վաճառական ի Կ. Պոլիս.

Ներկայ էին երկուց կողմանց բարեկամք և ազգականք.

Հրատարակեցաւ ԹՕՆԱԿի այսօրեայ թիւն հետեւեալ բովանդակութեամբ.

Կրօնական. Վերստին ծնունդ մարդոյ. —Վ. Վարպետական. Աստուած արարիչ. —Յ. Եկեղեցական. Կանոնագիրք. —Մարգարիտ եպիսկոպոս Օրմանեան.

Ստացանք ԵՒԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ շաբաթաթերթի այսօրեայ թիւն.

Հրատարակուեցաւ ԿՐԹԱՐԱՆ ամսօրեայ հանդիսի ապրիլի ամսաթիւն հետեւեալ բովանդակութեամբ.

Նամակ (Մ. Կիւրճեան)—Գիշեր մը Ալիսի տխանց մօտ.—Բրդոց ազգային երդն (Գ. Վ.)— Կեանք և մահ (Ա.).— Հայ լեզուի դիրքն (Լ. Տ.).—Մնուանդ (Լ.)— Այլ եւ այլք.—Հայկական Կրթարան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՍԷԼԱՄԼՐԲԸ

Եբլորդի պալատան մօտ կառուցուած թէբքէի մը և յարակից մզկիթին շինութիւնն աւարտած լինելով, Վեհ. Սուլթանն հրաւիրած է որ մզկիթը կոչուի Էրիէրու-Ճամի և թէբքէն ալ Շուլը Տէրէսը. Սոյն մզկիթին մէջ տեղի ունեցաւ երէկ Սէլամլրքի պարարութիւնն ինչպէս նաև թէ՛ թէբքէին և թէ մզկիթին բացման հանդէսը. Վեհ. Սուլթանը բաց կառքով և շքեղ հանդիսիւ Էրիէրու-մզկիթը գնաց. թէբքէին չէյխը՝ Զաֆէր էֆէնտի խնկաման

Նիա եւ Պէյօղա Վաքարէլի երկաթուղեաց ձեռնարկուներուն. Այդ հրաւէրի նպատակն էր համաժողով մը գումարել յորում պայմանագրոյ հիմանց համաձայն, պէտք եղած տնօրինութիւնք որոշուին միացման գծերու մասաւոր բացման առթիւ. Այս ձեռնարկ ապարդիւն մնաց սերպիական եւ օսմանեան երկաթուղեաց վարչութեանց մերժման առթիւ, որք յայտարարեցին թէ Բ. Դուռը տակաւին որոշած չէր թէ որո՛ւ պիտի յանձնէր իւր միացման գծերու շահագործումն.

Այժմ այս խնդիրը կարգադրուած լինելով և Բ. Դուռն ևս արտօնած լինելով Սկիւպ—Վրանիայի գծին բացումն, առաջադրեալ համաժողովը գումարեցաւ վերջապէս. Առաջին նիստը տեղի ունեցաւ անցեալ շաբաթ օր ի Բէշգա, հանրօգուտ շինութեանց պաշտօնատան մէջ, նախագահ Պ. Պարսէսի նախագահութեան ներքև. Աւստրիոյ և Հունգարիոյ պետական երկաթուղիք, Սերպիոյ պետական երկաթուղիք, սերպիական շահագործման ընկերութիւնն (որ կը ներկայացուցէր նաև միացման գծերու ընկերութիւնը որ իրեն թոյլատրած է Սկիւպ—Վրանիայի գծին շահագործումը) պուլկարական երկաթուղեաց վարչութիւնն ինչպէս նաև արևելեան երկաթուղեաց շահագործման ընկերութիւնն իւրաքանչիւրն իրենց պատուիրակութիւնները ղրկած էին. Այդ առաջին նիստը զոհուած լինելով ինչ ինչ նախապատրաստական խնդրոց կարգադրման և կատարելի աշխատութեանց համար օրակարգի մը պատրաստութեան, ժողովոյ առաջին կանոնաւոր նիստը բացուեցաւ կիւրակէ օրը. Պ. Լիւգվիկ, նախագահ տնօրէն Աւստրիոյ պետական երկաթուղեաց, պարագային յարմար բանախօսութիւն մ'արտասանելով, բարի գալուստ մաղթեց ներկայից. Ապա վիճաբանութիւնը բացուեցաւ օրակարգի առաջին խնդրոյն վրայ, որ էր միօրինակ սակագնոց հաստատումն. Վիճաբանելի միւս խնդիրներն էին ուղղակի ժամանակացոյցերու և թղթակցութեանց հաստատումն, ուղեւորաց համար ուղղակի սակագնոց որոշումն և քանի մը մասնագիտական կէտեր.

Պատուիրակք կը յուսային փութով աւարտել իրենց աշխատութիւնները որպէս զի կարենան Սելանիկ երթալ, ներկայ գտնուելու համար Սկիւպ-Վրանիայի գծին բացման որ տեղի կ'ունենայ այսօր.

ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կրթական Վսեմ. Նախարարին եւ գերմանական դեսպանին միջեւ վերջերս տեսակցութիւն մը տեղի ունեցած է Գերմանիա ղրկուելիք քսան պատանիներու ուսման ծրագրոյն վերայ. Այս պատանիք նախ գերմաներէն լեզուն պիտի ուսանին և յետոյ պիտի յաճախեն բարձրագոյն վարժարանները.

ԲԺԻՇԿԻ Ի ՍԿԻՏՈՐ

Թաղապետական Թ. շրջանակի տնօրէնին նախագահութեամբ կազմեալ յանձնաժողով մը, որում անդամ է նաեւ Տոքթ. Հայասը պէյ, ձեռնարկած է քննել Սկիւտարի մէջ բժշկութիւն ընող անձանց վկայագրերն. Առաջին նստին մէջ, որ տեղի ունեցաւ նախընթաց օր, քննուեցան և օրինաւոր դատուեցան վկայագիրք յիշեալ բժշկաց.

Տոք. Աթա պէյ, Իզզէր պէյ, Ալնի պէյ, Սիմոն պէյ Սեզրօսեան, Իսրահիմ էֆ., Թորգոմեան էֆ., Պ. Ժորժ Աբէկաքորիանէս, Պասեան էֆ., Մէհմէտ Նուրի պէյ, Մուսթաֆա Հիւսնի էֆէնտի և Գասպարեան էֆէնտի.

Ցանձնաժողովոյ երկրորդ նիստը տեղի կունենայ այսօր.

Թ. շրջանակի թաղապետութեան սոյն տնօրինութեան նպատակն է արգելուլ առանց վկայական բժիշկներն իրենց արուեստն ի գործ դնելէ յիշեալ շրջաբերականին մէջ.

ԺԱՄԱՆԱԿՈՒՆՔ

Երէկ մայրաքաղաքս ժամանեցին եդեսիոյ նախորդ կառավարիչ Ճավիտ փաշա՝ Իսկէնտերունէն, Լոնտոնի օսմանեան դեսպանատան նաւային կցորդ դեր-հազարապետ Իպրահիմ Լոմէմ էֆէնտի՝ Լոնտոնէն, Հանրօգուտ շինութեանց նախարարութեան արուեստագիտական գիւանի բարտուղար Առնիլ էֆ.՝ Բարիզէն, Տօքթէօռ Զամպաքօ փաշա՝ Կրէտէէն եւ Սանթուրին կղզւոյ Յոյն հոռոմէականաց մետրապոլիտ Տ. Կալէմպատ՝ Հռոմէն.

—Սեբաստիոյ համանուն թերթը կը ծանուցանէ թէ կուսակալ Սուրուրի փաշա մտադիր է քաղաքին մէջ հոլակալ զօրանոց մը կառուցանել եւ թէ այս առթիւ կը բանակցի Դ. զօրաբանակի հրամանատարին հետ. Այս զօրանոց պիտի կրնայ պարունակել հետեւակ զօրաց վաշտ մը եւ հեծելազօրաց գունդ մը.

—Ոստիկանութեան նախարար Վսեմ. Քեամիլ պէյ նախընթաց օր կայս. պալատ գնաց և Վեհ. Սուլթանի հրամաններն ստացաւ վերաբերմամբ իւր պաշտօնին.

—Աւստրիոյ հանգուցեալ Մարիա Թէրէզիա կայսրուհւոյն վերաբերեալ նիւթոց ցուցահանդիսին մէջ, ի մէջ այլոց կը գտնուի եղեր նաեւ թանկագին ձիու թամբ մը զոր Նուիրած է Սուլթան Օսման Գ. Այս թամբ գոյնզգոյն մետաքսներով եւ ոսկի ու արծաթի թելերով բանուած և թանկագին զմրուխտներով ու մարգարիտներով զարդարուած է.

Յառաջիկայ երեքշաբթի, 10|22 մայիս, Ռումանիոյ անկախութեան հրաւէրման և Քարլ Թագաւորին գահակալութեան տարեդարձը լինելով, Բերայի Յունաց Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ գոհաբանական աղօթքներ պիտի մատուցուին առաւօտուն և յետոյ եկեղեցական արարողութեանց, ընդունելութիւնք պիտի կատարուին դեսպանատան մէջ.

Երկու օր յետոյ, ինչպէս արդէն ծանուցինք, Մեծին Բրիտանիոյ թագուհւոյն ծննդեան տարեդարձն է.

Իսկ մայիս 15|27ին, այսինքն յառաջիկայ կիրակէ, Աղեքսանդր Գ. կայսեր գահակալութեան տարեդարձը լինելով, ընդունելութիւնք պիտի կատարուին ռուսական դեսպանատան մէջ.

—Երէկ Մուսանիոյ չոգենաւով Պրուսա ուղեւորեցան Մանսաղբրի տէֆթէրտար Մուսթաֆա պէյ, Բ. զօրաբանակին սպայակոյտի Մրլրիվաներէն Հաւան Պասրի փաշա, գերմանական ընդհանուր հիւպատոս Պ. Լոնէսթ Թռէսբօ, գերմանական դեսպանին եղբայր տը Բատովիճ զօրավարի կնոջն և դեսպանատան երրորդ թարգմանը.

—Երէկ ժամը 6ին Պէպէքի մէջ հրդեհ ծագելով փայտէն բէօշկ մը միայն այրեցաւ.

—Թիմուր օղու Իսմայիլ անուն հրաշակաւոր աւազակապետն, որ ահ ու սարսափ կը սփռէր Տրապիզոնի շրջակայքը, վերջերս ձերբակալուելով կիւմիշխանէի բանտը դրուած էր, Տրապիզոնի հարուստ կալուածատէրերէն միոյն Ֆազը պէյ անուն միակ որդին սպաննած լինելուն համար. Թիմուր Օղլու Իսմայիլ յաջողած էր փախչիլ այդ բանտէն, սակայն գունդ մը ոստիկանք զայն հալածելու ելնելով, արիւնկալ աւազակապետին պատահեր և կատաղի կռուոյ մը մէջ ծանրապէս վիրաւորեր են զայն. Թիմուր Օղլու մերձակայ պահականոց մը տարուելով, մի քանի ժամէն մեռեր է.

—Երէկ ծանուցինք թէ Պոլսոյ Էսկի Ալի Փաշա թաղը ջրհորի մը մէջէն թուրք կամնավաճառի մը դիակը գտնուած էր. Ոստիկանութիւնն հարկ եղած քննութիւնը կատարելով թուրք կին մը եւ Մուսթաֆա ու Հասան անուն երկու անձեր ձերբակալած է իրր կասկածելի.

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

Երէկ գիշեր, Նոր Թատրոնի սակաւաթիւ հանդիսականք ախորժակ գտնեցին Պ. Աշոտի ձեռնածուական ճարտար փորձերն որք կը հաւասարէին, եւ ուրեք ուրեք կը գերազանցէին իսկ զինքը կանխող օտարազգի արուեստագիտաց փորձերն. Երիտասարդ ձեռնածուն իրաւունք ունէր ակնկալելու որ աւելի մեծ թուով հանդիսականք, գէթ Բերայաբնակ հայեր, քաջալերէին զինքն, երբ օտար ձեռնածուաց ներկայացմանց երեկոյթներուն բազմաթիւ հայեր ներկայ գտնուած են. Այսու հանդերձ, Պ. Աշոտ իւր փորձերը կատարեց այնքան ճարտարութեամբ եւ եռանդեամբ, որքան եթէ հոծ բազմութիւն մը գրաւած լինէր թատրոնի սրահն. Իւր յայտագրի երեք զրօսալի մասերն ալ գործադրեց յոյժ յաջող կերպիւ և ամեն անգամ ծափահարեցաւ, մանաւանդ թղթի խաղերու մէջէն, որոցմով շատ մը ինքնանկնար և նոր փորձեր կատարեց.

* *

Պ. Մէլիէտէն՝ յոյն ձեռնածուն, այս գիշեր եւ վաղը գիշեր երկու ներկայացումներ պիտի տայ ի Նոր Թատրոն, իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելու համար Բերայի հասարակութեան. Պ. Մէլիէտէի այս երկու ներկայացումնը ժողովրդական լինելով, օթեկով և նստարանով բոլոր գներն զգալապէս զեղչուած են.

Պ. Մէլիէտէս փորձ և վարժմի ձեռնածու մ'է և իւր փորձեր ևս շահեկան են և զրօսալի.

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՆՍ ՀԱՎԱՍ

Լոնտոն, 18 մայիս

Երբեմնեան ժողով. Արտաքին գործոց խորհրդական Սըր Ճ. Ֆէրրիւսը, հարցման մը պատասխանելով, կը յայտարարէ թէ Անգլիա ոչ մէկ համաձայնութիւն կնքած է Նիւթական գործողութեան մը համար.

Լիվերբուլ, 18 մայիս

Անգլիական զօրաց ընդհանուր հրամանատար Գէմբրիճի դուքսն, երէկ իրիկուն ատ իրեն տրուած հացկերոյթի մը մէջ, ըսաւ թէ ոչ մէկ փոփոխ կ'սպառնայ այժմ, այլ պէտք է պատրաստ լինիլ ամեն պատահականութեանց և միւս ազգաց զինուորական յառաջդիմութեանց բարձրութեան հաւասարիլ.

ԴՐԱՄԱԿԱՆ

Վայլաթիա, 7 մայիս

Օսմանեան Ֆոնտիւիտի

		Դահեկան
Սրբէկ երեկոյ գոց. (Միաց. Ի)	Սերի Գ.	4. 15 29 1/2
Պօրսային գոցուածքն վերջը	» »	15 29
Բերայի մէջ	» »	— —
Առաւօտուն բացուածքս	» »	15 29
Բարձրագոյն գին	» »	15 29
Նուազագոյն »	» »	15 29
Կէս օրին	» »	15 29

ԻՍՊԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԻՔ

Երէկ երեկոյ	Գ. 4. 37 1/4
Այս առաւօտ	» 37 1/4
Կէս օր	» 37 1/4

ԸՆԹԱՑԵՐ ԱՐԺԵԹԻ ԹՈՒՆ

Փոխառութիւն	1858)	Սերի Գ. 4.	24 30
»	1862)		
»	1860)		
»	1863) Ե	» »	14 25
»	1872)		
»	1865)		
»	1869) Ե	» »	0. 15 29
»	1873)		

ԲԱՆԿԱՆՏՈՒՄՈՒԹ

Օսմանեթի լիմիթեդ	Ազգ. Լ. 4 15
Ֆրէտի լիմիթեդ	Օսմ. » 7 18
Պանք տը Ֆրանս	» 6 28
Օսմ. Շանմի է վայէօր	» 4 15
Ֆրաժուէյ	» 420
Բուսմէրի երկաթուղի	Ֆր. 40 75
Օպլիկասիոն տը Բրիօրիթէ	» —
Բանքնեթուղի Լաբրիսմի	» 138

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 18 մայիս ժամ 5 վայր. 15 երկայ.

Ազգ. բանսիտ			99 3/16
Օսմ. »	Սերի Գ.	բացուածքս	14 1/16
» »	»	գոցուածքս	14 1/16
» »	»	Ա.	24
» »	»	Բ.	14 3/8
» »	»	Գ.	13 7/8
Օթոման 1871			82 3/4
Փոխառութիւն 1877			95 1/2
Պանք Օթոման			10 3/8
Ռուսական փոխառ. 1873			94 3/16
Եգիպտական միացեալ (ինդիֆիզ)			79 3/16
» առանձն. (բրիմիէ-մէրիկ)			100 3/8
Տայրա Սանիկ			76 1/4
Տօմանեալ (փոխառ. Բարիզ)			101 1/4
Հունգարական պարտատոմսերի 4 %			— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ			25 46

Վիէննա, 18 մայիս ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 80
Օսմանեան երկաթուղի	20 20

Բարիզ, 18 մայիս ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական լիմիթ 4 1/2 %			105 62 1/2
» » 3 %			82 62 1/2
Օսմանեան քանսոլիտ	Սերի Գ.	բացուածքս	14 30
» »	»	գոցուածքս	14 27 1/2
» »	»	Բ.	14 50
» »	»	Գ.	14 20
Օսմանեան երկաթուղի			40 25
» Բէյտիի բանքնեթուղիք			— —
Պանք Օթոման			518 75
Գրէտի Լիոնէ			582 50
» Յոմնիթ			1420
Բանքնատոմ Լիոնի			1240
Սուէզի ջրանցք			2171 25
Ռուսական 5 % 1877 ի			100 1/8
